Լիլյա Ավետիսյան
Եվրասիա միջազգային համալսարանի Կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Արմինե Մանասյան
Եվրասիա միջազգային համալսարանի Հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժնի պատասխանատու, կառավարման ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Սույն հոդվածում համեմատական վերլուծության է ենթարկվել բարձրագույն կրթության կառավարման միջազգային փորձը, մասնավորապես ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կրթական համակարգերը, ուսումնասիրվել են ՀՀ բարձրագույն կրթության կառավարման հարցերը, դիտարկվել է պետության դերը այս գործընթացում՝ որպես մրցակցության պայմաններում բարձրագույն կրթության կառավարման ոլորտում հիմնական դերակատարում ունեցող սուբյեկտի:

Հիմնաբառեր. բարձրագույն կրթություն, կրթության կառավարում, կրթական համակարգ, Բոլոնյան գործընթաց:

Ժամանակակից համաշխարհային տնտեսության հիմքում, որպես զարգացման ռազմավարական գործոն, հանդես է գալիս գիտելիքահեն կրթությունը: Կրթությունը նաև տնտեսության առանձին խոշոր ոլորտ է, որտեղ ձևավորվում են դրա կարևորագույն տարրերը՝ գիտելիքը, հմտությունները, աշխատուժի որակական հատկանիշները: Մի շարք հետազոտողների դիտարկմամբ կրթության ոլորտի շրջադարձային ժամանակաշրջանը համարվում է 20-րդ դարի վերջին կեսը, որը նշանավորվեց կրթության մասսայականացմամբ: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում ուսանողների թվաքանակն աճեց ավելի քան վեց անգամ: 1970-ական թվականներից հետո բարձրագույն կրթությունը լայն տարածում գտավ ամբողջ աշխարհում: 2009թ. ամբողջ աշխարհում բարձրագույն կրթություն էր ստանում շուրջ 165 մլն. ուսանող, որը համարժեք է 1970 թվականի ցուցանիշի հնգապատիկին[1]: Այս ամենի արդյունքում օրեցօր աճեց կրթության նշանակությունը, իսկ գիտական միտքն ուղղվեց այս ոլորտի ուսումնասիրմանը: Տարբեր երկրներում կազմակերպվեցին հատուկ նշանակության քննարկումներ, գիտահասարակական միջոցառումներ՝ նվիրված կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության հիմնահարցերին[2]: 1998 թվականին Փարիզում ընդունվեց «Բարձրագույն կրթությունը XXI դարում մոտեցումների և գործնական քայլերի համաշխարհային հռչակագիրը»,

[1] Տե՛ս. Գրիգորյան Կ. Հ., Կրթական համակարգի միջազգայնացման ինովացիոն հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ....Երևան 2014, էջ 17:
[2] Տե՛ս Մեյրոյան Վ. Փ., Բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2013, էջ 10:

որտեղ նշվում էր, որ XX դարի վերջին կեսը մարդկության քաղաքակրթության պատմություն կմտնի որպես բարձրագույն կրթության բուռն զարգացման ժամանակաշրջան: Հենց այստեղ քննարկվեցին այնպիսի խնդիրներ, որոնք կրթության համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ էին առաջ քաշվում[3]:

Հատկանշական է, որ ըստ մի շարք միջազգային իրավական ակտերի (Լիսաբոնյան կոնվենցիա, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Բարձրագույն կրթության մասին համաշխարհային հռչակագիրը 21-րդ դարում և այլն)՝ կրթության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է[4]: Գրականության մեջ հանդիպում են «կրթություն» հասկացության սահմանման բազմաթիվ ձևակերպումներ: ՄԱԿ-ի կողմից սահմանված ծառայությունների 12 հատվածներից մեկը կրթությունն է, իսկ բարձրագույն կրթությունը՝ կրթության 5 ենթահատվածներից մեկը (նախնական կրթություն, միջնակարգ կրթություն, բարձրագույն կրթություն, մեծահասակների կրթություն և կրթության այլ ձևերի)[5]: Ընդհանուր առմամբ բարձրագույն մասնագիտական կրթությունը կարելի է բնութագրել որպես որոշակի մասնագիտական գործունեության յուրացման գործընթաց և միառժամանակ՝ արդյունք: Բարձրագույն կրթությունը ամբողջական համակարգ է, որը բաղկացած է կրթական ծրագրերից, կրթական հիմնարկություններից և նրանց կառավարման մարմիններից, ինչպես նաև այդ ծառայությունները սպառողներից[6]: Մինչդեռ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ «բարձրագույն մասնագիտական կրթությունը առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթությունն է»[7]: Բարձրագույն կրթության կառավարումը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսական առաջընթացի առանցքային և գերակա հարցերից մեկն է, և հենց այս ոլորտի արդյունավետ քաղաքականությունն է, որ ապահովում է կայուն առաջընթաց պետության համար: Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը պետության ուղղորդված և համակարգված գործունեությունն է, որն ուղղված է համապատասխան ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացմանը, որոնք կրում են նաև համընդհանուր բնույթ[8]: Փաստ է, որ բարձրագույն կրթության ոլորտում պետությունների միջև մրցակցության ուժեղացումը համարվում է նաև տնտեսական մրցակցություն, քանի որ այն հանդիսանում է ազգային անվտանգության և, առհասարակ, յուրաքանչյուր քաղաքացու կենսամակարդակի

---

[3] Տե՛ս Հարությունյան Հ. Զ., «Հ Հ բուհական համակարգի կատարելագործման և միջազգայնացման տնտեսագիտական հիմնախնդիրները», Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան-2008, էջ 10:

[4] Տե՛ս Գրիգորյան Կ. Հ., Կրթական համակարգի միջազգայնացման ինովացիոն հիմնախնդիրները (ՀՀ օրինակով) Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան 2014, էջ 10:

[5]Տե՛ս UNESCO, Higher Education in a Globalized Society, UNESCO Education Position Paper, 2004, էջ. 4, http://unesdoc.unesco.org/images/0013/001362/136247e.pdf (վերջին մուտքը՝ 19.02.2018):

[6] Տե՛ս Մելիքյան Ա.Վ., Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության կառավարման արդի հիմնախնդիրները, Ատենախոսություն, Երևան 2013, էջ 12:

[7] Տե՛ս «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք ընդունված 14.12.2004, ՀՀՊՏ 2005.01.31/8(380) Հոդ.159, փոփոխություններով և լրացումներով 03.02.2016, հոդված 3, կետ 1: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1595 (մուտք 04.03.2018):

[8] Տե՛ս Мамедов А. А., Государственное регулирование в сфере высшего образования, Москва 2006, էջ. 29:

բարձրացման գլխավոր գործոններից մեկը: Կրթական համակարգը, նրա որակը երկրի զարգացման առանցքային գործոններից են: Թերևս մարդկային պատմության բոլոր ժամանակներում այս հարցին մշտապես անդրադարձ է եղել: Մասնավորապես Քսենոֆոնը (մ.թ.ա. 430-355թթ.) գտնում էր, որ կրթությունը նախևառաջ պետության գործն է, որը պետք է դաստիարակի կատարյալ քաղաքացիների[9]: Այդուհանդերձ, պետությունը և բարձրագույն ուսումնական հաստատությունը կրում են փոխկապակցված պատասխանատվություն կրթության որակի համար: Համալսարանը, տալով բարձրագույն կրթության մասին դիպլոմ, ի դեմս պետության հաստատում է, որ շրջանավարտն ունի գիտելիքի անհրաժեշտ մակարդակ, իսկ պետությունը, որպես հասարակական շահերի պաշտպան կրթության ոլորտում, փորձում է ապահովել այն պայմանները, որոնք նպաստում են կրթական համակարգի բնականոն գործունեությանը: Պետության հիմնական խնդիրը այս պարագայում արդյունավետ գործող կառավարման համակարգի ապահովումն է՝ պետության և հասարակության շահերին համապատասխան: Ավանդաբար տարբեր ժամանակներում և երկրներում համալսարանները համարվել են ոչ միայն գիտության դարբնոց, այլև ազատական գաղափարների տարածողներ, որոնք, սակայն, մշտապես ստացել են իրենց սահմանափակումները ոչ միայն հասարակության կողմից, այլ նախևառաջ՝ պետության: Երկրների մեծ մասում բարձրագույն ուսումնական հաստատություններն իրենց գործունեության համար պատասխանատու են առաջին հերթին պետության առջև: Եվ հենց սա է պատճառը, որ բուհերի գործունեության համապատասխանությունը երկրի գործող օրենսդրությանը և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, վերահսկվում է ոչ միայն համալսարանի հիմնադիրների, այլև օրենքով սահմանված կարգով լիազորված մարմինների կողմից[10]: Այսօր բարձրագույն կրթության կառավարման գործում ուշադրության կենտրոնում են ուսումնական հաստատությունների ստորաբաժանումների և դրանց գործունեության կատարելագործման, ուսումնական գործընթացի կազմակերպման և այլ հարցեր:

XX դարի վերջին բարձրագույն կրթության ոլորտում համաշխարհային ազատականացումը հանգեցրեց բուհերի ինքնավարության մեծացմանը: Այսինքն՝ բուհերը ստացան սեփական ռազմավարության, ֆինանսական, միջազգային համագործակցության լայն իրավասություններ: Գլոբալացման արդյունքում ընդգծվեցին կրթության յուրահատուկ դրսևորումները, մասնավորապես՝ անդրսահմանային կրթությունը, մեգահամալսարանները, հեռավար (դիստանցիոն) կրթությունը և այլն[11]: Հարկ է նշել, որ ներկայումս տարբեր երկրների բուհական համակարգերում կրթական գործընթացներն այնքան են զարգացել, որ ի հայտ է եկել կրթության ոլորտի և նրա միջազգայնացման գործընթացների՝ համաշխարհային մասշտաբով կառավարման անհրաժեշտություն: Այս խնդիրներով զբաղվում են այնպիսի միջազգային կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Համաշխարհային բանկը, Մեծ ութնյակի երկրները: Ըստ որում՝ վերոնշյալ միջազգային կառույցների

[9] Տե՛ս Բարխուդարյան Գ. Ա., ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման տնտեսագիտական արդի հիմնախնդիրները, Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան 2016, էջ 13:

[10] Տե՛ս Խաչատրյան Ն.Ն., Որակի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում, Ատենախոսություն, Երևան 2009, էջ 73:

[11] Տե՛ս Հարությունյան Հ. Զ., «Հ Հ բուհական համակարգի կատարելագործման և միջազգայնացման տնտեսագիտական հիմնախնդիրները», Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան-2008, էջ 27:

կողմից մշակվում են կանոններ, որոնց կիրառումը մասնակից երկրների կողմից պարտադիր է, եթե նրանք մասնակցություն ունեն կրթական ծառայությունների միջազգային շուկայում: Իսկ ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում մի շարք խոշոր ընկերություններ աշխատաշուկայում առաջադրում են այնպիսի պայմաններ, որոնց պատճառով համալսարանների առաջնային խնդիրը դառնում է ժամանակի մարտահրավերներին համապատասխան բանիմաց մասնագետների պատրաստումը: Այս համատեքստում բարձրագույն ուսումնական հաստատությունն ունի լուրջ դերակատարում կայուն զարգացման գործընթացի ապահովման հարցում՝ առաջադրելով համապետական և ազգային հիմնախնդիրներին առնչվող լուծումներ և ակտիվորեն մասնակցելով դրանց իրականացմանը: Այս ամենն իրենց հերթին ստեղծում են պետության անվտանգության ամրապնդման կայուն հիմքեր:

Մի շարք տեսաբաններ կարծում են, որ բարձրագույն մասնագիտական կրթությունը յուրաքանչյուր պետությունում հանդիսանում է աղքատության կրճատման գործոն զբաղվածության միջոցով, քանի որ անձին հիմնական աշխատանքը տրվում է ինքնարտահայտման, ինքնադրսևորման հնարավորությամբ, որն առավելապես հնարավոր է նախընտրած մասնագիտությամբ և որակավորմանը համապատասխան աշխատանք ունենալու պայմաններում[12]: Սա նպաստում է պետության ինքնատիպության պահպանմանը: Պետությունը կրթության բնագավառում իրականացնում է մի շարք գործառույթներ, մասնավորապես՝

- հանդիսանում է երաշխավորող յուրաքանչյուր անհատի կրթության իրավասության համար,
- համարվում է պետական կրթական քաղաքականության հիմնադիր,
- հանդես է գալիս որպես կրթական ծառայությունների շուկայի կարգավորող,
- համարվում է պետական բուհերի հիմնադիր,
- սահմանում է պետական չափորոշիչներ և իրականացնում է բուհերի հավատարմագրում,
- «վճարողն» է պետական անվճար կրթական ծառայությունների և այլն:

Պետության կողմից կրթության վրա կատարած ծախսերը դիտարկվում են որպես ներդրումներ, քանի որ դրանք անհրաժեշտ են մարդկային կապիտալի վերարտադրության և կայուն զարգացման համար[13]:

Ներկայումս զարգացող երկրների համար բարձրագույն կրթության օրինակելի նմուշօրինակներ ընդունված է համարել ամերիկյան և եվրոպական մոդելները: Հատկանշական է, որ թե՛ Եվրոպայում, և թե՛ ԱՄՆ-ում բարձրագույն կրթության ոլորտում շարունակվում են իրականացվել փոփոխություններ. այլ երկրները պարբերաբար վերափոխում են իրենց կրթական համակարգերը ժամանակակից մարտահրավերներին համապատասխան: Մի շարք տեսաբանների կարծիքով Եվրոպայում կրթական համակարգը թերևս վաղ ժամանակներից ուղղված է եղել կրթելու հասարակության էլիտային, իսկ ամերիկյան կրթական համակարգը՝ ընդհակառակը՝ արտացոլում էր կրթության հասանելիությունը ժողովրդավարացման գործընթացում: Գլոբալիզացիայի գործընթացը հանգեցրեց նրան, որ եվրոպական կրթական համակարգի շրջանավարտը սկսեց տիրապետել առնվազն երկու լեզվի,

[12] Տե՛ս Բարխուդարյան Գ. Ա., ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման տնտեսագիտական արդի հիմնախնդիրները, Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան 2016, էջ 16:
[13] Տե՛ս Բարխուդարյան Գ. Ա., նշվ. աշխ. էջ 27:

որից մեկը՝ անգլերեն, մինչդեռ ամերիկյան ուսանողները շատ հազվադեպ էին հակված այլ օտար լեզվով արդյունավետ հաղորդակցվելուն: Այդուհանդերձ, ամերիկյան բուհերը այսօր փորձում են այդ թերությունը շտկելու փորձեր կատարել արտերկրում անցկացվող կիսամյակային ծրագրերի միջոցով և համագործակցել եվրոպական գործընկերների հետ կրթական կոնսորցիումի միջոցով[14]: Այդուհանդերձ, 2018 թ. աշխարհի լավագույն համալսարանների տասնյակը գլխավորում են ԱՄՆ-ի համալսարանները, որին հաջորդում են Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի և այլ երկրների համալսարանները[15], իսկ ըստ Times Higher Education-ի կազմած համաշխարհային բուհերի վարկանիշի՝ աշխարհի լավագույն 200 համալսարանների ուղիղ կեսը գտնվում է ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում[16]: Պատճառներից մեկն այն է, որ այս երկու երկրներն էլ կիսում են բարձրագույն կրթության հետազոտական հարուստ որակն ու մշակույթը, որը նպաստում է ակադեմիական ազատությանը և ապահովում է ուսուցման գերազանց միջավայր:

Փաստ է, որ առաջինը ԱՄՆ-ում են ձևավորվել և փորձարկման ենթարկվել ժամանակակից բուհական համակարգի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են կրեդիտային համակարգը, իրավականորեն ամրագրված բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարությունը, բուհերի հանրային և մասնագիտական հավատարմագրումը: Այստեղ գերիշխում է մասնավոր հատվածը (բուհերի 72 %-ը)[17]: Համաշխարհային մակարդակով գիտության և բարձրագույն կրթության ոլորտներում ԱՄՆ-ը զբաղեցնում է առաջատար դիրքեր, ինչը նախևառաջ պայմանավորված է ամենաուժեղ և ամենամրցունակ կրթական համակարգով: Այդ համակարգին համաշխարհային ճանաչում են բերել Հարվարդի, Բերկլիի, Ստենֆորդի, Փրինսթոնի, Յեյլի, Կոլումբիայի, Կոռնելի համալսարանների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի շրջանավարտների և աշխատակիցների հարյուրավոր գիտական հայտնագործությունները: Տարբեր նահանգների ուսումնական հաստատությունների միջև սերտ կապի, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի փոխանակման, մեծամասամբ միասնական պահանջներ ներկայացնող, միմյանց հետ աշխատանքային սերտ կապեր ունեցող և իրենց գործունեությունը համակարգող հասարակական հավատարմագրող կազմակերպությունների միջոցով երկրում ուսումնական հաստատությունների բազմազանության և կրթության համակարգի կառավարման ապակենտրոնացվածության պայմաններում ստեղծվում է միասնական կրթական միջավայր, և պահպանվում է կրթական հաստատությունների ինքնավարության սկզբունքն ու ակադեմիական ազատությունները[18]: Ինչևիցե, ԱՄՆ-ում բարձրագույն կրթության համակարգը, ի տարբերություն մյուս համակարգերի, պետական մակարդակով այդքան էլ կազմակերպված չէ, սակայն

[14] Տե՛ս Andrzej J. Gapinski, Higher Education: Europe vs. USA, Penn State University-Fayette, Pennsylvania, USA, 2010, p1,http://www.laccei.org/LACCEI2010-Peru/published/IGE082_Gapinski.pdf, (վերջին մուտք՝ 10.03.2018):

[15] Տե՛ս Աշխարհի համալսարանների վարկանշային աղյուսակ, https://www.topuniversities.com/university-rankings/world-university-rankings/2018 (վերջին մուտք՝ 20.03.2018):

[16] Տե՛ս UK vs. USA Education System https://www.internationalstudent.com/study-abroad/guide/uk-usa-education-system/ (վերջին մուտք 08.12.2017):

[17] Տե՛ս Հարությունյան Հ.Զ., «ՀՀ բուհական համակարգի կատարելագործման և միջազգայնացման տնտեսագիտական հիմնախնդիրները», Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան-2008, էջ 36:

[18] Տե՛ս Պետրոսյան Հ.Հ, Կրթության ժամանակակից համակարգեր. Ուսումնական ձեռնարկ: Լուսաբաց հրատարակչություն-Եր. 2005, էջ 7:

այն համապարփակ է[19]: Կան առանձին դաշնային ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են և վերահսկվում ԱՄՆ կրթության նախարարության կողմից: Բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրմամբ զբաղվում են մոտ 60 անկախ գործակալություններ: Ամերիկյան մասնավոր բարձրագույն կրթական հաստատությունները կառավարում են այսպես կոչված «հոգաբարձուների խորհուրդը»-ը, որի մեջ մտնում են հասարակության մեջ բարձր դիրք գրավող և հաճախ ապահովված մարդիկ, ովքեր հանդիսանում են բուհերի շրջանավարտներ և բուհերի օգտին զբաղվում են բարեգործությամբ: Նրանք, օգտագործելով իրենց հասարակական դիրքը, կարողանում են ուրիշներին ևս մղել բարեգործության: Պետական բուհերը կառավարվում են կրթության պետական վարչությունների կողմից, որոնց ղեկավարները հաճախ նշանակվում են նահանգապետի և հավանության արժանանում նահանգի օրենսդիր մարմնի կողմից: Այս վարչությունները ներկայացնում են կոնկրետ քոլեջի կամ համալսարանի շահերը[20]: 2014թ. դրությամբ ԱՄՆ-ում գործում է 4627 բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցից 448-ը՝ Կալիֆոռնիա նահանգում, 304-ը՝ Նյու Յորքում: Այդ ցանկում երրորդ և չորրորդ տեղերում Տեխասը և Փենսիլվանիան են[21], ընդ որում դրանցից շուրջ 1700-ն են պետական: Յուրաքանչյուր նահանգում առկա է մեկ համալսարան և մի քանի պետական քոլեջ, որոնք իրենց անվանումներում պարտադիր կրում են «պետական» անունը, օրինակ՝ Վաշինգտոնի պետական համալսարան: Հասարակության տեսանկյունից ամերիկյան համալսարանները բաժանվում են ոչ թե պետականի և մասնավորի, այլ՝ ըստ վարկանիշի, հեղինակության: Դրանք ունեն ուղղվածություն դեպի աշխատաշուկան: Օրինակ՝ Հարվարդի, Փրինսթոնի և մի շարք այլ համալսարանների դիպլոմները ոչ միայն տալիս են աշխատանքի ընդունման մեծ երաշխիքներ, այլ նաև հարգանք հասարակության մեջ: Հարկ է նշել, որ պետական և մասնավոր բուհերի միջև տարբերությունը, ինչպես առկա է Եվրոպայում, գրեթե բացակայում է: Ընդհանուր առմամբ բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսանողների թվով այդ թվում՝ նաև արտասահմանյան, ԱՄՆ-ն աշխարհում գրավում է առաջին տեղը: ԱՄՆ-ում գնահատվում է բուհերի բարձրաստիճան ինքնավարությունը, քանի որ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, այստեղ մի շարք հարցեր կարգավորում են հենց իրենք՝ բուհերը:

Պակաս ուշադրության արժանի չէ նաև Մեծ Բրիտանիայի բարձրագույն կրթության կառավարման մոդելը: Կառավարման ոլորտում կան բազմաթիվ մասնագիտացված գործակալություններ՝ Որակի ապահովում, Բարձրագույն կրթության վիճակագրություն, վերլուծական գործակալություններ, որոնք, բացի իրենց բուն մասնագիտացված գործունեությունից սերտ համագործակցում են Կրթության դեպարտամենտի հետ, մասնավորապես՝ համակարգի կառավարման նպատակային խնդիրներում: Այս գործակալությունները ոլորտում պետական քաղաքականության իրագործողներն են, ինչպես նաև բուհերի հետ անմիջական շփվողները: «Մեծ

[19] Տե՛ս The European Education Directory, http://www.euroeducation.net/prof/usa.htm, (վերջին մուտք 05.04.2018):

[20] Տե՛ս Սուվարյան Յու.Մ, Հարությունյան Վ. Լ, Սարգսյան Վ. Ա., ԽաչատրյանՎ.Վ, Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Եր. 2013, էջեր 71-73:

[21] Տե՛ս Number of higher education institutions in the United States from 1980 to 2015 https://www.statista.com/statistics/240833/higher-education-institutions-in-the-us-by-type/ (վերջին մուտք 05.04.2018):

Բրիտանիայի համալսարաններ» կազմակերպության և Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի կողմից ստեղծվել է Լիդերության հիմնադրամը, որով խթանվում է բուհական համակարգում ղեկավար աշխատողների վերապատրաստումը[22]: Այստեղ բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է որոշակի չափանիշներ ունենան «համալսարան» կոչումը ստանալու համար: Այս ինստիտուտներին գնահատում է Որակի ապահովման գործակալությունը Privy Council-ի անունից, որը «Հետագա և բարձրագույն կրթության մասին» օրենքի համաձայն պատասխանատու է «համալսարան» և «համալսարանական քոլեջ» կոչումների տրամադրման համար: Որակի ապահովման գործակալությունը հանրային տեղեկատվություն է տրամադրում համալսարանի կամ քոլեջի ակադեմիական ստանդարտների և որակի վերաբերյալ: Այդուհանդերձ, առավելագույն վարկանիշ ունեցող համալսարանները այստեղ համարվում են Օքսֆորդը և Քեմբրիջը, որոնք հիմնադրվել են դեռևս միջին դարերում, հանդիսանում են դասական համալսարաններ և համարվում են բրիտանական բարձրագույն կրթության օրենսդիրներն ու երաշխավորողները: Բուհական համակարգի փոխգործակցմանը, տարածաշրջանային միավորումների ստեղծմանը, միջազգային մարտահրավերներին դիմակայելու վառ օրինակ է Իտալիայի կողմից նախաձեռնած և 2000 թվականին Ռավեննայի կոնֆերանսով կազմավորած բարձրագույն կրթության Ադրիատիկ-Իոնյան ցանցը (UniAdrion)[23], որը ներառում է Ալբանիան, Հունաստանը, Բոսնիա-Հերցեգովինան, Սերբիան, Սլովենիան, Մակեդոնիան: Միջազգային այս ցանցի շրջանակներում մշակվում են սեմինարներ, գիտաժողովներ, հետազոտական ծրագրեր, ամառային դպրոցներ և կադրերի փոխանակումներ:

Միջազգայնացման գործընթացները հանդիսանում են 21-րդ դարում տարբեր երկրների բուհական համակարգերի կառուցվածքային և համակարգային բարեփոխումների հիմք: Այս բարեփոխումները տարբեր բնույթ ունեն, և ներկայումս գոյություն չունի դրանց իրականացման համընդհանուր ընդունելի ռազմավարություն: Ներկայումս բուհական համակարգում խորքային գործընթացները տեղի են ունենում հատկապես Եվրոպայում Բոլոնյան գործընթացի շրջանակներում, որին 2004 թվականի մայիսի 19-ին պաշտոնապես միացավ նաև Հայաստանի Հանրապետությունը: Այդուհանդերձ, ելնելով միջազգայնացման մարտահրավերներից՝ յուրաքանչյուր երկիր ինքն է մշակում իր բարեփոխումների ռազմավարությունը և հայեցակարգը: Եվրոպական կրթական դաշտի զարգացումների ուսումնասիրությունները նպաստեցին որոշակի միտումների զարգացման, որոնք կարող են հիմք հանդիսանալ բարձրագույն կրթական կառավարման բարեփոխումների ռազմավարություն մշակելու համար: Բարձրագույն կրթության կառավարման **մակրոմակարդակում** կարելի է թվարկել հետևյալ միտումները.[24]

- **մրցակցությունը.** համաշխարհային մակարդակում, մասնավորապես Եվրոպայում, մրցակցությունը ի հայտ է գալիս առաջատար հետազոտական համալսարանների շրջանում, քանի որ այս համալսարանները հա-

[22] Տե՛ս Հարությունյան Հ. Զ., «ՀՀ բուհական համակարգի կատարելագործման և միջազգայնացման տնտեսագիտական հիմնախնդիրները», Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան-2008, էջ 37:

[23] Տե՛ս UniAdrion, Virtual University of the Adriatic-Ionic Basin, www.uniadrion.net (վերջին մուտք 10.03.2018):

[24] Տե՛ս Սուվարյան Յու.Մ, Հարությունյան Վ. Լ, Սարգսյան Վ.Ա., Խաչատրյան Վ.Վ: Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Եր. 2013, էջեր 84-86:

վաքագրում են օտարերկրյա և սահմանակից երկրների այն ուսանողներին, ովքեր նախապատվությունը տալիս են այլ երկրի և ոչ թե ազգային բուհին[25]: Իսկ պետության տեսանկյունից բուհերի մրցակցության հանգեցնում են մշտապես բարձր որակավորված դասախոսական անձնակազմի, ուսանողների մեծ թվաքանակի և դրա հետ կապված կրթության և հետազոտությունների համար հատկացվող պետական միջոցները,

- **բարձրագույն կրթության ֆինանսավորման պայմանների փոփոխությունը.** առանձին երկրներում կրթության, հետազոտությունների համար ֆինանսավորման ծավալը որոշվում է մրցույթով՝ հաշվի առնելով արդյունավետության որոշակի ցուցանիշներ (օրինակ՝ ուսանողների թվաքանակը): Եվրոպական շատ երկրներում քննարկվում է բարեփոխումների երկու ուղղություն՝ ուսման վարձի համակարգի զարգացում և կազմակերպական արդյունավետության բարձրացում: Մի շարք երկրներում իրականացվող միջոցառումներից է բուհերի միավորումը, ցածրածախս բուհերի ստեղծումը և մեկ դասախոսի հաշվով ուսանողների թվաքանակի մեծացումը: Ինչ խոսք, առաջ է քաշվում նաև այն վարկածը, որ նման միջոցառումները հանգեցնում են կրթության որակի անկման: Վառ օրինակ է Լիտվայի խորհրդարանի կողմից 2017 թվականի հունիսին ընդունված «Լիտվայի բարձրագույն կրթության ցանցի օպտիմալացման ծրագիրը»[26], համաձայն որի Լիտվայում, մասնավորապես՝ Վիլնյուս և Կաունաս քաղաքներում, պետք է ստեղծվի երկու բուհ, որոնք առաջարկելու են լայնաշերտ ուսումնասիրություններ, ինչպես նաև հանդիսանալու են տեխնոլոգիական, առողջապահական գիտությունների մասնագիտացված առաքելություններ ունեցող համալսարաններ: Համալսարանական մակարդակով գիտական կենտրոնները, որոնք համապատասխանում են տարածաշրջանային կարիքներին, կպահպանվեն Կլայպեդա և Շյաուլի քաղաքներում այլ համալսարանների ինտեգրման հնարավորությամբ: Այս բարեփոխումը կփոխարինի 21 համալսարանի և 22 քոլեջի ներկայիս ցանցին: Այնուամենայնիվ, ըստ որոշման բուհերը ինքնավար են և կարող են իրենց նախապատվությունը միավորման տեսակետից առաջարկել խորհրդարանին,
- **որակի ապահովում**. կրթության որակի չափման համար հաճախ հետազոտողները հիմք են վերցնում տարբեր երկրների կրթական համակարգերի համեմատականության սկզբունքը, համաձայն որի մի երկրում (օրինակ՝ ԱՄՆ-ում կամ Մեծ Բրիտանիայում) կրթական հաստատությունների պահանջը բավականին մեծ է, մինչդեռ այլ երկրների կրթական հաստատությունները բավարարվում են միայն «տեղական շուկայով»:

[25] Տե՛ս Marginson S., Dynamics of national and global competition in higher education, Springer 2006, էջ. 3 http://melbournecshe.unimelb.edu.au/__data/assets/pdf_file/0008/1664315/HEd_2006_national_and_global_competition.pdf (վերջին մուտք 19.03.2018):

[26] Տե՛ս Optimisation of the higher education network in Lithuania http://ec.europa.eu/education/compendium/optimisation-higher-education-network-lithuania_en (վերջին մուտք 23.01.2018):

Այս համատեքստում անդրադարձ կատարենք ավելի քան 700 տարվա պատմություն ունեցող ՀՀ բարձրագույն կրթության համակարգին: Հատկանշական է, որ 1991թ. անկախության ձեռքբերումից հետո ՀՀ բուհական համակարգը ենթարկվեց կառուցվածքային կտրուկ փոփոխությունների: Շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացումը պահանջեց նոր մոտեցումներ ցուցաբերել ոչ միայն բարձրագույն մասնագիտական կրթության որակի, այլ նաև կրթական ծառայությունների նկատմամբ: Պետական և ոչ պետական բուհերի, ինչպես նաև հայրենական և արտասահմանյան կրթօջախների գործունեությունը հանրապետությունում ձևավորեց կրթական ծառայությունների մատուցման նոր շուկա, որը հետզհետե սկսեց թելադրել իր կենսագործունեության տնտեսական օրենքները: ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում կատարվեցին արմատական բարեփոխումներ[27]., որոնցից էին.

- բարձրագույն ուսումնական հաստատությունների աճը,
- մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի և իրավական այլ հիմնարար փաստաթղթերի ընդունումը,
- եվրոպական կրթական համակարգին ինտեգրումը,
- ՀՀ-ում միջկառավարչական պայմանագրերի հիման վրա համատեղ կրթական հաստատությունների հիմնադրումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման նոր եղանակների արմատավորումը:

Մասնավորապես 1995թ., իրար միացնելով կրթության բնագավառի երկու նախարարություններ, կազմավորվեց ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: 1992թ. սկսած բուհերում պետպատվերին զուգընթաց կիրառվեց նաև վճարովի համակարգը, որտեղ բուհն ինքն էր սահմանում ուսման վարձի չափը: ՀՀ կառավարությունը սահմանում էր անվճար կրթության տեղերի քանակը՝ ելնելով յուրաքանչյուր մասնագիտության պահանջից և կատարելով բյուջետային հատկացումներ (պետպատվեր): Տնտեսական ճգնաժամի հետևանքով աշխատաշուկայի և ուսումնական հաստատությունների նախկին կապերն ընդհատվեցին: Աշխատանք գտնելը դարձավ շրջանավարտների դժվարին և հաճախ չլուծվող հիմնախնդիրը: 1998 թ. վերջին կառավարության որոշմամբ ստեղծվեց կրթական բարեփոխումների կենտրոնը նախկին չորս գիտակրթական ինստիտուտների հենքի վրա: Կենտրոնը կոչված էր կազմակերպելու և վերահսկելու կրթության ոլորտի բարեփոխումների ընթացքը, ուսումնական նոր ծրագրերի և դասագրքերի ստեղծումը և այլն: 2004թ. Կենտրոնը վերակազմավորվեց Կրթության ազգային ինստիտուտի: 1999թ. ապրիլի 14-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Կրթության մասին ՀՀ օրենքը», որը հիմնված էր սահմանադրական սկզբունքների վրա և հռչակում էր ինքնավարության ապահովումը, սակայն անփոփոխ էր թողնում կենտրոնացված վարչարարական մոտեցումը այդպիսով սահմանափակելով բուհերի ակադեմիական ազատությունները: 2004թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են բուհական համակարգի կատարելագործման դրույթները: 1994թ.-ից ի վեր աճել է բուհական համակարգի պահանջարկը՝ հանգեցնելով բարձրագույն կրթության

[27] Տե՛ս Մելիքյան Ա.Վ., Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության կառավարման արդի հիմնախնդիրները, Ատենախոսություն, տնտ. գիտ. թեկ.... Երևան 2013, էջ 52:

մասսայականացման: 2000թ. հունիսի 23-ին ՀՀ կառավարության թիվ 344 որոշմամբ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կառուցվածքում ստեղծվեց «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն» պետական կառույցը, որը գործում է ԿԳՆ ենթակայությամբ, ներկայացնում է ուսումնական հաստատությունների հավատարմագրման մասին եզրակացություններ, իրականացնում է պետական վերահսկողություն ուսման որակի և մասնագիտությունների ու հաստատությունների հավատարմագրման նկատմամբ: 2000թ. հուլիսի 7-ին ՀՀ կառավարության թիվ 372 որոշմամբ հաստատվեց բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և նրանց մասնագիտությունների հավատարմագրման կանոնակարգը: Հավատարմագրված բուհերը ստանում են պետական հավատարմագրման վկայական, որը հավաստում է նրանց կրթական ծրագրերի մակարդակը, բովանդակությունը և շրջանավարտների որակը: 2001թ. հունվարի 16-ին ՀՀ կառավարության թիվ 24 որոշմամբ հաստատվեց բարձրագույն կրթության չափորոշիչները, որոնցով միևնույն ժամանակ կարգավորվում են ուսումնական լիցենզիաների տրամադրումը և բուհերի ուսումնական ծրագրերի հավատարմագրումը: Այս ամենը հանգեցնում է որոշակի մրցակցության մասնագիտական կրթության բնագավառում:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ նշենք, որ ներկայումս բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով՝ բուհի կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ: Կրթության և գիտության ողջ համակարգի կառավարումը (այդ թվում՝ հեռակա, հեռավար (դիստանցիոն)) իրականացնում է պետական լիազորված մարմինը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, որը հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին: Նախարարությունը կրթության բնագավառին վերաբերող բոլոր հարցերը լուծում է իր իրավունքների շրջանակներում՝ չխախտելով կրթական հաստատություններին գործող օրենսդրությամբ վերապահված ինքնուրույնությունը, սակայն նրա կողմից արձակված հրամաններն ու մեթոդական ցուցումները պարտադիր են բոլոր ուսումնական հաստատությունների համար:

Այսպիսով, վերը նշված օրենքներն ու օրենսդրական ակտերը փաստում են, որ ՀՀ-ում գիտակրթական ոլորտի կառավարչական առավելագույն ներուժը կենտրոնացած է պետության ձեռքում և իրականացվում է պետական իշխանության օրենսդրական և գործադիր կառուցվածքների միջոցով:

Այդուհանդերձ, ոլորտը դեռևս ունի կարգավորման որոշակի ճանապարհ անցնելու կարիք: Այսպես՝չնայած, որ օրենսդրության մեջ հստակեցված են կրթության ոլորտում ՀՀ կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները և սահմանափակումները, այդուհանդերձ բուհերը զգալի կախվածություն ունեն ՀՀ կրթության և գիտության նախարարությունից: Նույնիսկ կարևորագույն հարց հանդիսացող դիմորդների ընտրությունը վերապահված չէ բուհերին, և բավական ժամանակ ընդունելության քննություններ են անցկացվում

կենտրոնացված կարգով՝ առանց բուհերի ակտիվ մասնակցության: Մինչդեռ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ համալսարանները գործուն մասնակցություն ունեն իրենց դիմորդների ընտրության հարցում: Եվ երկրորդ, մեր բուհերը հանդիսանում են խոշոր հարկատուներ: Ստեղծվել է մի իրավիճակ, որ բուհերը տարեկան խոշոր հարկեր են մուծում պետական բյուջե: Հետևապես ստացվում է, որ մի կողմից պետությունը բուհերին հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշելու տնօրինած ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, մյուս կողմից պարտադրված հարկային քաղաքականության հետևանքով թույլ չի տալիս լայն թափով զարգացնելու համալսարանական գործունեությունը:

Որպես վերջին տարիների դրական միտում՝ փաստենք, որ ներկայումս ՀՀ Կրթության բնագավառում իրականացվում են նաև միջազգային համագործակցություններ, որոնք կազմակերպվում են ՀՀ օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան: Լավագույն օրինակ է ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջազգային փոխանակման «Էրազմուս+» ծրագիրը: Ներկա ՀՀ բուհական համակարգի զարգացումն ու մրցունակությունը ապահովում են նաև օտարերկրացի ուսանողները, իսկ վերջիններիս ներգրավման հիմնական շարժառիթը համեմատական գնային մատչելիությունն է:

Ամփոփելով փաստենք, որ բարձրագույն կրթության կառավարման ամենանշանակալի բարեփոխումը, այդուհանդերձ, 2004թ. Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես միանալն էր, որից ի վեր Հայաստանի կառավարությունն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները արձանագրեցին նշանակալի առաջընթաց: Կարծում ենք, որ բարձրագույն կրթության հարցում նոր բարեփոխումներ կմտցնի նաև ՀՀ ԱԺ-ում շրջանառվող «Կրթության մասին» նոր օրենքը:

Лилия Аветисян
Преподаватель кафедры управления Международного университета Евразия, кандидат экономических наук, доцент
Армине Манасян
Ответственный Отдела общественных связей и рекламы, студентка 2-ого курса магистратуры кафедры управления и информационных технологий Международного университета Евразия

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ УПРАВЛЕНИЯ ВЫСШИМ ОБРАЗОВАНИЕМ И ЕГО ОСОБЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В этой статье представлен сравнительный анализ международного опыта управления высшим образованием, в частности образовательных систем США и Великобритании, изучены вопросы управления высшим образованием РА, рассмотрена роль государства в этом процессе в качестве основного субъекта в сфере управления высшим образованием в условиях конкуренции.

Ключевые слова: высшее образование, управление образованием, образовательная система, Болонский процесс.

Lilya Avetisyan
Lecturer of the Chair of Management at Eurasia International University, PhD, Associate Professor
Armine Manasyan
Responsible Person at the department of Public Relations and Advertising, MA 2nd year student, Department of Management, Eurasia International University

INTERNATIONAL EXPERIENCE IN HIGHER EDUCATION MANAGEMENT AND ITS PECULIARITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

In this article there has been done a comparative analysis for international experience in higher education management, particularly in the United States (USA) and the United Kingdom (UK) education systems, the issues of the higher education management of RA have been studied. In this aspect there has been observed the role of the state as a player with a great role in higher education management in the competitive conditions.

Key words: higher education, education management, education system, Bologna process.